

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏՈՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի. Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.
Մեր Կոպէն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 258.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 258.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԲԱՐԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԻ

(31-Դ ՏԱՐԻ)

ԱՄԱՂԻԿԱՅ 1903 ԹԻՎԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՆՈՒԹԱՄԲ

Կամ են օր, բացի առն օրերէն յաջորդող օրերէն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ ամսովանը՝ նոյն պէս 10 ռ., տասն ամսովանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսովանը՝ 8 ռ., եօթ եւ վեց ամսովանը՝ 6 ռ., հինգ ամսովանը՝ 5 ռ., չորս ամսովանը՝ 4 ռ., երեք ամսովանը՝ 3 ռ., երկու ամսովանը՝ 2 ռ. եւ մի ամսովանը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՄԱՇՄԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՐԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա եւ Բարոնկայա փողոցների անկիւն), իսկ ԲԱԳՐՈՒՄ՝ Ն. Դաւթեանի մօտ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրելու հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊՐԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Սօֆիա Սօլոմոնովնա Զիթախեան, Աննա Իվանովնա եւ Տիգրան Համբարձումեան Էնֆիւնանց, խորին կերպով ցնցված վշտով կորուստով, յայտարարում են իշխանութիւն:

ՄԵՐԻՆ ԻՎԱՆՈՎՆԱ ԲԷԴԻՍԻԿԵԱՆԻ

(Մեծ Զիթախեանի)

Վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ նոյեմբերի 20-ին:

Հոգեհանգիստներ ամեն օր Նրեկոյեան 7 ժամին հանգուցեալի ընկալարանում, Սերգիեվկայա փողոց, սեփական տուն: Մարմին յուղարկուողութիւնը կը լինի կիրակի, նոյեմբերի 24-ին, առաւօտեան 10 ժամին, դէպի Վանքի մայր եկեղեցին, իսկ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը:

3—3

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ

Ամուսնանալուց յետոյ ռուս ինտելիգենտ կնոջ մէջ չէ նշմարվում նոյնպիսի ձգտում դէպի ինքնուրոյն, անկախ աշխատանք եւ դա մասամբ հասկանալի է. բացի վերոյիշեալ հանգամանքներից, որոնք սակայն են օրինորդին աշխատանք որոնել, ամուսնանալուց յետոյ նրա պարտականութիւնները ընտանիքում աւելանում ու բարդվում են. միաժամանակ եւ մայր լինել եւ ընտանիքից դուրս աշխատել, դա եթէ ոչ անկարելի, գոնէ շատ դժուար է, եւ յաճախ պէտք է ընտրել երկուսից մէկը: Բայց որքան էլ կնոջ աշխատանքը անտես, պարտաճանաչ մայր ու ամուսին լինի, անային աշխատանքը ընտանիքում չի տայ նրան կատարեալ ինքնուրոյնութիւն, թէեւ նա իր ամբողջ կենսին ու եռանդը նուիրէ այդ ընտանիքի բարօրութեանը: Բողոքով անկախ, ազատ լինելու համար անհրաժեշտ է, որ կինն էլ մարդու պէս իր աշխատանքով ապրէ, բայց ինչպէս միացնել մօր եւ այդպիսի աշխատանքի պարտականութիւնները—ահա ճկանացի հարցն է: Եթէ կնոյն, որի առջ կանգ են առնում շատերը...

Դուք, ընթերցող, գիտէ՞ք ի հարկէ օրինակներ, երբ կնոջ կարողացել է ամբողջութեամբ միացնել այդ պարտականութիւնները. դրանք կամ արտակարգ եռանդի կանայք են, կամ այն հասունացած, ազատութեան օրհրհար կանայք, որոնք չեն ուղղում նիւթական կախում ունենալ, որոնք ձգտում են անկախ, սեփական աշխատանքով ապրել եւ վերջապէս նրանք, որոնք անկախական պայմանները, կարելի է օտի-

պում այդ անկախ: Շատ դժուար է, ի հարկէ, այդպիսի կանանց դերը կենքի մէջ, բայց ոչ անկարելի եւ անհնար, որ դրանք միայն բացառութիւններ են:

Ամուսնացած ռուս կնոջ մէջ նոյնպէս նուազում է եւ նոյն անձնագոհութեան հասնող գաղափարականութիւնը. նա կարծես աւելի ետամուր, աւելի էգոիստ է դառնում. մասամբ դա էլ հասկանալի է: Նա իր զգացմունքների, իր պարտականութիւնների մեծագոյն մասը նուիրում է իր ընտանիքին, իր երեխաներին: Ընտանիքն անկախ չի չլինում նա իրականացնում է նոյն գաղափարները, պարտաւարելով իր երեխաներից ֆիզիկապէս եւ հոգեպէս առողջ, ազնիւ, քաղաքացիներ: Բայց եւ այնպէս, ընտանիքը չէ կարող եւ նրան հասարակական պարտականութիւնների, չէ նուազեցնում նրա հայրենասիրութիւնը: Նա միշտ արձագանք է ապրի ժողովրդական ընթերցանութիւններ, կազմակերպում է կիրակնօրեայ դպրոցներ, հետաքրքրվում է հասարակական երեւոյթներով, հետեւում է պարբերական հրատարակութիւններին, ուսումնասիրում է գրականութիւնը:

Թէ ընտանիքում եւ թէ հասարակութեան մէջ ռուս ինտելիգենտ կնոջ իր կարծիքները, իր համոզմունքները, իր «եռ»ը ունեցող մի անդամ է: Նա ազատաբար չի ինքնուրոյն չէ, բայց այնուամենայնիւ նա ազատ մարդու տեղը պարտական է գործում: Ահա այդ հոգեկան ազատութիւնն է, որ այնքան գեղեցկացնում է ռուս կնոյն:

Այժմ մի քանի խօսք հայուհու մասին: Մեզանից ամեն մէկը, որ փոքր ի շատէ՛ ճանաչում է հայ գիւղը, ծանօթ է եւ հայ գեղը. կուհու առաքելութեան, նրա անձնամոռացութեան հասնող ընտանիքական պարտաճանաչութեան հետ: Անձնական վայելքներից, ցանկութեան հետ կնոջ կնոջ է այն:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կերակնօրեայ զրոյց. Դուրեւ Ֆրանսիական պատկերասրահների մասին. Նամակ Եկատերինօզարից. Ներքին լուսեր.—ԱՐՏԱՄԱՇՄԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուսեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար.—ՀԵՒՆԱԳՐԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կանանց հարցը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱՅԻՈՐԵԱՅ ԶՐՈՅՑ

Թիֆլիսը նորոգման չլիանի մէջ է. Կատարվել է մի իրողութիւն, որ մեծ է գոնէ մեր տեղական լրագիրների համար: Մի ամբողջ շաբաթ է, եւ կարող է եւ այդ լրագիրները եւ ամեն անգամ նայում եմ վերնազրին. հօ նոր տարի չէ, հարցնում եմ ինքս ինձ եւ տեսնելով, որ 1902-ի իշխանութեան տակ ենք դեռ, նոր միայն հասկանում եմ, որ Թիֆլիսի համար է լրագիրների այն լեզուն, որ ամբողջաբար գործ է ածվում իւրաքանչիւր հին տարվայ վերջին եւ նոր տարվայ առաջին օրերում:

Այս, ճիշտ եւ ճիշտ այդ օրերը. Հայիւ եւ տալիս հին մասին, քանգաւանքով, համարեա անէծքներով ճանաչող են դնում այդ հինը, իսկ նորը ողջունում են ժողովներից: Որքան մեղադրանքներ հին վրա բարդված եւ որքան յոյսեր, որքան հաւատ նոր ծնողի, նոր եկողի առաջ: Ցաւեր ու դարձեր շատ ունենք, հինը ոչինչ չարաւ, չազատեց մեզ այդ ցաւերի գոնէ մի մասից. թող, որեւէ, կորչէ նա, անհետանայ իր խաւար յիշատակով: Նորը կը բերէ մեզ բախա եւ երջանկութիւն. մենք հաւատում ենք դրան, մենք ամբողջովին յոյս ու ակնկալութիւն ենք դառնել:

Ինչպէս չը լինէ նոր տարին: Նոր տարի—նոր բախա, նոր երջանկութիւն: Հինը գնայ, էլ յետ չը գայ...

Այսպէս էլ այսօր. նոր դուստ, նոր բախա, նոր երջանկութիւն: Հին դուստն գնայ, էլ յետ չը գայ...

Թիւններից դուրս, ամբողջապէս նուիրված իր օջախին, իր նամուսին, ծանրաբեռնված անթիւ պարտականութիւններով, նա գիտէ միայն հնազանդել, կատարել մարդու, օկեօրայրի, օկեօրի, տաքոր կամը եւ այդպէս շարունակ մինչեւ ծերութեան օրերը, երբ նա իրաւունք է ստանում մեծութիւն անել. այնքան երկար տարիների ընթացքում ճնշված, իրաւազուրկ լինելով, նա կարծես վրէժխնդիր է լինում իր անցեալին, վրէժ է հանում խեղճ, անլեզու հարսներից:

Այդպէս էին եւ մեր դասակարգին պատկանող հին սերունդի կանայք: Իսկ ինչ են նոր սերունդի, այսպէս ասած, քաղաքակրթված հայ կանայք: Ինտելիգենտ կանայք մենք չունենք, բացի, ի հարկէ, մի քանի անհատներից, բայց մենք ունենք մեծ թիւով գիմնասիական աւարտած եւ արտաքուստ քաղաքակրթված կանայք: Դրաւորում օտարացած պաշարը, որ պէտք էր իրեն հում նիւթ, իրեն միջոց ծառայելու ապագայ զարգացման համար, երկար անդորրութիւնից յետոյ հետզհետէ անհետանում է: Ինքնակրթութիւնը մեր կանայք չեն պարտաւորւում, դրականութեանը չեն հետեւում, հասարակական կենսաբով, հասարակական երեւոյթներով չեն հետաքրքրվում: Ինչպիսիք, գաղափարականութիւն, հարեւաբարութիւն, այդ բոլորը խորթ հնչիւններ են հայուհու համար. մինչդեռ նրանց զարգացման համար պարտաւոր հող որքան կամենաւ. մեր իրականութիւնը, մեր ժողովրդի խաւար, մեզ կորսեցինք պէտք է, որ արթնանան հայուհու գգաբանները. բայց... հայուհու բոլոր ձգտումները սահմանափակվում են միայն նեղ անձնական ապահովութեան գգաբաններով: Մարդու գնալ եւ լաւ ապրել—ահա նրա դէլիքը. իսկ լաւ ապրել նշանակում է—ճոխ հագնվել, չառլ եւ անգործ կենալ վարել եւ այլն:

Այս է ամենախոշոր նորութիւնը Թիֆլիսում: Մենք նորոգվում ենք, ընթերցող, եւ. ինչպէս տարին տառնելու ամիս մենք ապրում ենք, աչք անկելով թէ երբ կը գայ նոր տարին, որպէս զի ցանկութիւններ յայտնենք, բարեփոխութիւններ անենք, այնպէս էլ Թիֆլիսը ամբողջ հինգ տարի ապրում էր այս օրին, երբ ձայնաւորների նոր կազմն էր գործի գլուխ անցնում, որպէս զի իր անէծքներն ու վառ ցանկութիւնները արտաքուստ, ցոյց տայ, որ ինքը մեծերութիւն չէ, դիակ չէ, այլ որքան էլ դանդաղաշարժ, որքան էլ ծոլ ու կորած լինի, դարձեալ գիտէ, որ աշխարհում կայ նա լաւ ապրուստ, որ այդ ապրուստից ինքն էլ պիտի ունենայ երբ եւ իցէ:

Եւ չէի օգտուում, որ մեր քաղաքը այսքան ուշադիր լինի դէպի իր շահերը: Բայց տեսէ՛ք քանի անգամ լրագիրները ապագայից նոր ձայնաւորների անունները, տեսէ՛ք ինչպէս են չեղում, որ նոր կազմի մէջ կան երիտասարդ, թարմ ոյժեր: Երկու նիստ ունեցաւ նոր դուստն. եւ որքան մեծ ուշադրութեամբ լսում էր քաղաքը իր նոր հայրերին: Նկարագրեցին նորների իւրաքանչիւր շարժումը, նկարագրեցին նոյն իսկ թէ ով ինչ տեղ է նստել, թէ ովքեր կան ընդդիմադիր կուսակցութեան նստարանների վրա, ովքեր են կազմում աջակողմը, ովքեր են ձախակողմը, կենտրոնը, որտեղ նրանցին բոլորովին նոր, բոլորովին երիտասարդ, դուստի դակիճին դեռ չը օտարած ձայնաւորները:

Մի խօսքով, եւ այնքան բաւ կարգացի մեր քաղաքային այս մեծ դէպքի մասին, որ յափշտակված, վերացած էին իմ ամբողջ ուշադրութիւնը կանաչ էին այդ օրտառուէլ, յուզիչ մանրամասնութիւնները. թէեւ երբեք չեմ լինում դուստի նիստերում, բայց մտքիս առջեւ ամեն րոպէ պատկերացած էր այդ քաղաքային պատգամաւորների դառնաբանութիւնը, այդ աշխուղող, կենտրոն, ձախակողմը:

Ինձ կը ներքե, ընթերցող, եթէ այդ բոլոր տպաւորութիւնների խիստ ազդեցութեան տակ եւ մոռացել էի իրականութիւնը: Այս, ինչ ծածկեմ, ամենից դուրս գալիս եւ օգտուում:

Հայ օրիորդը, եթէ նա հարուստ է, հաւատացած է, որ շատերին կը գրաւի այդ հարուստութիւնը, որ փողի ոյժով նա շատով մարդու կը դնայ: Յոգնած նա գիտէ եւ այն սակարկութիւնների մասին, որ տեղի են ունենում նրա ծնողների եւ ապագայ ամուսնու մէջ, բայց այնքան ընտելացել է այդ դուրսութեանը, որ չէ օտարափոխ, կարծես չէ զգում թէ որքան վերաւորական է այդ նրա թէ մարդկային եւ թէ կանայցի ինքնասիրութեան համար:

Եթէ նա հարուստ չէ, չունի օժիտ, որքան թոյլ, անօգնական է զգում նա իրան... Որքան ծանր դրութիւն երկու դէպքերումն էլ: Միայն ինքնաճանաչութիւնը, մտաւոր ու հոգեկան լայն զարգացումը եւ աշխատանքը կարող են հանել հայուհու այդ ամօթալի դրութիւնից:

Հայուհին այժմ գտնվում է մի անորոշ ճանապարհի վրա. նա դուրս է եկել մեր հին անանական կարգերի չլիանից եւ իւրացնելով քաղաքակրթութեան հեշտ, արտաքին եւ բացառական կողմերը, մնացել է կոսմոպոլիտ հասանելի մէջտեղը—հին եւ նորի չէլքին: Ծիշ է, վերջերք երեւան են գալիս անհատներ, որոնք ձգտում են դէպի լոյս, գիտութիւն եւ աշխատանք, եւ մենք հաւատում ենք, գոնէ ուզում ենք հաւատալ, որ ներկայ դրութիւնը ժամանակի հարց է, որ հայուհու դուրս գալ այդ անորոշ դրութիւնից, կը գտնէ իր ուղին եւ պատուաւոր տեղ կը բռնէ կուստուրական կանանց շարքում:

Անցեալում հայ կնոջ միշտ նեցուկ է եղել աղամարդուն ընտանիքում, ապագայում նա մեծ դեր ունի կատարելու հայերի բարոյական վերածնութեան գործում: Թէ իրեն մայր եւ թէ իրեն հասարակութեան անդամ:

Սօֆիա Դանիելեւնա

էի տեսնել մի նոր թիֆլիս, մի թիֆլիս, որ նման չէր պիտի լինէր երկվայ, անցեալ օրվայ թիֆլիսին։ Թուով էր թէ հին, նահապետական լապտերները պիտի խօսեն պատերից, պիտի ասեն թէ չուտով, շատ չուտով երկարական չքով լուսաւորութիւնը կը գայ իրանց սպանիչ աղօթութիւնը փոխարինելու համար։ Քարուքանդ եղած մայթերը պիտի տեսնէին մեր ոտներէն անցնելով թէ բաւական է, իրանք այլ եւս չը պիտի ասնջեն մարդկանց փողին, ցիւրը պիտի շատ եռանդով իրանց հրաժարականները տային։ Կտրեմ ասած՝ մի նոր լուսամուկը պիտի փչէր թիֆլիսեան, թարմ ու յուսատու, ինչպէս ձայնաւորները նոր կազմով։ Եւ ես սպասում էի այդ նորութեան, սպասում էի մեր քաղաքի հանդիսաւոր վերանորոգման սկսվող հոսանքները տեսնելու։ Սպասում էի, դանդաղեցնում էի քայլերս, նայում էի ամեն կողմ։

Աւագ Գառնիքը միայն։ Նոր տարի օրը դուրս գլուխ էր գալիս փողոց այն արամադրութեան տակ, թէ պիտի նոր մարդկանց, նոր աշխարհ տեսնէր։ Բայց ինչ էր տեսնում։ Աղմուկ, շնորհաւորվող նորութիւն, իսկ չուրջը ամեն ինչ նոյնը, հինը, սովորականը, ձանձրոյթ ու անզուգական բերող անփոքարկանք իր ամբողջ մեղադրանքով դէմքով։ Եւ դուրս հասկանում էր, որ ճոր, նոր կոչւնները ծէս են միայն, արարողութիւն միայն, իսկ աշխարհը, իսկ մարդկութիւնը դնում է իր սովորական, միանշանակ քայլերով։

Այսպէս է եւ թիֆլիսի այսօրվայ նորութիւնը։ Մենք կարող ենք հրճել, մենք կարող ենք մեր նոր հայրենիք ամբողջ կենսադրութիւններն անգամ անգիր տանել, մենք համար արհեստ դարձնել այդ նոր, այդ լուսնաւոր քաղաքը։ Բայց, իւրաքանչիւր շարժումը յափշտակութեամբ դիտելու Բայց դա ծէս է, դա արարողութիւն է։ Վաղը, հէնց որ մի բնի էլ հնանայ այսօրվայ նորութիւնը, մենք դարձնալ կը հաշտվենք այն խղճով, բայց ճիշտ մաքր հետ, թէ անձններով ձանաղարհած հինը եւ ժպիտներով դիմաւորած նորը իսկապէս միեւնոյն բաներն են...

Այսօրվայ ծէսի, երեսխաղական հրճուանքների մասին արանց աւել չարժէք էլ խօսելու մտ լուսն էմ եմ դաւանական ընթերցողի ձայնը, որ ասում է։ Ենթա ինչ, եթէ ձեր թիֆլիսը հինը անխնայով եւ նորը օրհնելով է գրադրված այս քաղաքին, ինչ էնչ, թէ ձեր փողոցները ցիւրտ են, ձեր լապտերները հին են, նահապետական։

Այն, իրաւունք ունի գաւառական ընթերցողայն աղաղակ տեսնելու Բայց ես էլ իրաւունք ունեմ պատասխանելու։ Հաւատարմի եւ քայլ, ուրախացիր, ընդ համար էլ մեծ ուրախութիւն պիտի լինի, որ թիֆլիսի դուռնի փողովից, դու էլ պիտի անխնայ հինը եւ նորի վերաբերմամբ ասես՝ փառք Աստուծոյ։

Իմ այս խօսքերը հասկանալու համար խնդրեմ ուշադրութիւն դարձրու մի մեծ, իսկապէս մեծ եղանակեան վրա։ Այս անգամ էլ, ինչպէս եւս անշնորհում, ձայնաւոր ընթերցողին եւ վրացիներին։ Առաջ ընտրված վրացիները հրաժարվում էին, այս անգամ չը հրաժարվեցան։ Այս անգամ մեր քաղաքային տան մէջ ձայնաւորների նստաբաժնիները վրա բազմած կը լինեն եւ վրացիները։

Գիտէ՞ք ինչ բարեարարութիւն է օտ, գիտէ՞ք որքան մեծ լուսնութիւն արին մեզ մեր վրացի եղբայրակիցները, որ այս անգամ չը խոսովեցին։

Այդ բանը իմանալու համար մտաբերեցէք, թէ այս վերջին 7—8 տարիներում ինչքն եւ ինչքն էին գրվում մեր մտքին։ Թիֆլիսի դուռնայում հայեր էին համարեալ բոլոր ձայնաւորները. եւ սա նշանակում էր, որ հայերը աներեսներ են, հարստահարութիւն են, որ նրանք իրանց ձեռքն են առել ամբողջ Անդրկովկասը, որ նրանց դէմ պէտք է կռիւ մղել, որ հարստահարված, սարսակ Կովկասը պէտք է ազատել նրանց ճիւղաններից։ Որքան էլ ես աշխատեմ, այդ տամ երեւակայութեանս եւ յիշողութեանս, չեմ կարող ի հարկէ, նոյն-իսկ զատաւորել մի դիւթին այն անհաշիւներից, որոնք տրվում էին մեզ 7—8 տարիների ընթացքում։ Որքան բաներ գրվեցան, որքան թուղթ մրտացին, որքան կուրծք ծեծեցին, քանի քանի անգամ օգնութիւն կանչեցին։ Սարսակների է մտաբերելն անգամ։

Բոլոր դժբաղդութիւնների պատճառը հայերն են. ապացոյց այն, որ թիֆլիսի դուռնան հայերից է բաղկացած։ Թանգութիւն է, առաջադրութիւններ կան, գիւղացիները, արհեստաւորները քաղցած են, հայերն են խառնադրում, ապացոյց՝ թիֆլիսի դուռնան։ Եւ յիշում եմ, որ նոյն իսկ հայ շարժաններին սոսկալի վամպիրներ էին հրատարակել եւ ասել ու վճռել էին

թէ այդ չարիքից ազատվելու համար չը կայ, քանի որ Կովկասում թիֆլիս կայ եւ թիֆլիսում հայկական դուռն կայ։ Մեզ անարգում, մրտաւում էին, միշտ աչքներս կոխելով թիֆլիսի դուռնան։ Տարբերութիւն, զանազանութիւն ոչ մի դէպքում։ Հայ է թիֆլիսի ձայնաւորը եւ դու, գաւառի մի խուլ անկիւնում կեցված քաղաքացի, մի հրէշ էիր հէնց այդ զացի հայ, որ օր ու վիշտ ամենօրեալ ես քո հոգի վրա, քո հոտի հետ, որ հարստահարված ես չարչիւններից ու վախաւորներից. որքան էլ ամենօրեալ, որքան էլ խեղճ ու կրակ լինէիր, քո մարմնի մի բարի խօսք չը կար, չէր կարող լինել, որովհետեւ թիֆլիսի դուռնան հայերից էր բաղկացած։

Իդուր էինք մենք ասում, կրկնում, տալը, քան անգամ կրկնում, թէ թիֆլիսի դուռնան մի մասնաւոր երեւոյթ է, թէ մենք ինքներս կը կամենայինք, որ հայ բուրժուազիայի հետ քաղաքային նստաբաժնիների վրա բազմած լինեն շատ վրացի եւ ուրիշ ազգի բուրժուազներ, թէ դրանից մենք ոչինչ վնաս չէինք ունենայ, քանի որ բուրժուազն մի եւ նոյն պտուղն է, ինչ ազգից էլ լինի, նա միայն իր յարմարութիւնն է տեսնում, իր շահերն է պաշտպանում։ Մենք յոգնեցինք այս պարզ ճշմարտութիւնը հարելու ու մի անգամ կրկնելուց, բայց կարողացանք մեր ձայնը լռեցնել տալ։ Ոչ, երբեք։ Շարունակեցին յանցանքներ, զղուելի, հրէշաւոր յարցանքներ օտեղծել մեր վերաբերմամբ եւ միշտ ամեն անգամ իրեն ապացոյց բերել թիֆլիսի դուռնան։

Ահ, այդ ապացոյցը։ Գանի քանի անգամ միջնիւ ստի խորքը վերաբերված լրագրիների զղուելի զրգարատութիւններից, մեղանից ամեն մէկը անխնայ է այդ ապացոյցը, քանի քանի անգամ ամեն մէկը ցանկացել է, որ վերանայ, ոչնչանայ այդ պատճառը։ Տէր Աստուծոյ, ինչքն չէին տեսնում Սովորականները, վերջիվերջը, Գործադրականները Մենք պետական դաւաճաններ ենք, մենք պետականք ենք հրատարակել կովկասեան բոլոր ազգութիւնների դէմ, մենք ուղղակի վախճաւոր տարր ենք։ Սարսակներ, սարսակներ... Եւ միշտ մի եւ նոյն ապացոյցը, միշտ անփոփոխ, անյիճելի ապացոյց—Թիֆլիսի դուռնան...

Այժմ այլ եւս չը կայ այդ ապացոյցը։ Եւ միջնիւ ամենք չը պիտի ուրախանանք։

Դուռնայի նոր կազմը խաղաղութիւն է բերում։ Զր հաւատաւոր, որ այդ նորերը հրաշքներ պիտի գործեն, թիֆլիսը դառնալ պիտի դարձնեն։ Ոչ, այդպիսի բաներ կարող է անել մի լուսնաւորութիւն, պարտաճանաչ սերունդը, իսկ մենք գիտենք, թէ որքան անարժան է այժման սերունդը այդ անուններին։ Թող այդպէս լինի։ Թող հինուրեւ կրիան ամեն իր մէջքի վրա մեր բարեկեցութիւնն ու առաջադիմութիւնը։ Բայց կայ այն գիղցելի հանդիմանքը, որ ազգայնական կրքերը չեն վառված այժմ, կրճիք տախտակներ չեն ծեծվում, լաց ու կոծ չը կայ, վայնառուն չէ բարձրանում։ Թիֆլիսը կարողով ազգութիւններից զոհ են, զանգաւաններ չունեն եւ վճռել են միեւնոյն, միաբան հաւաքվել մի յարկի տակ եւ աշխատել, աշխատել որքան կարող են, որքան միջոցներն են ներում։

Տասնեակ տարիներ են, ինչ թիֆլիսը չէ տեսնել այսպիսի բարեբաղդութիւն։ Աստուծոյ տայ, որ ազգութիւնների այն համաբաշխութիւնից աւելի մեծ օգուտներ տեսնեն մեր հասարակական շահերը։

Բայց սա մասնաւոր բան է։ Մեր ամբողջ հայ ժողովրդի համար ընդհանուր բարեբաղդութիւնն այն է, որ նրա անգործ, վայրենի թշնամիները այլ եւս չեն ունենայ իրանց ձեռքում այդ անխնայ ապացոյցը։ Մեր դէմ ուղղած հաւաքին, անվերջ տմբատախազից ջնջվեց ամենազրկաւոր հիմքը, ամենամեծ ապացոյցը։

Մենք էլ, ուրեմն, անէծքով ճանապարհներ հին դուռնան. նա մեզ համար չարիք էր դարձել։ Ողջունենք նորը. թէ մի ուրիշ օգուտ չը տայ էլ նա, գոնէ մի առիթ կը դառնայ, որ մեզ հանգիստ թողնեն։

Իսկ օտ էլ բարիք է, մեծ բարիք...

Լ.

ԴԱՐՁՆԱԿԱՆ ՁԵՐՆԱԿԱՆ ՊԱՏԿՈՒԹՅԱՆ ԴԵՄՈՆՍՏՐԱՄԵՆՏ

Նախ մի քանի խօսք ասենք հայրենասիրական գաղափարի առիթով։ Ամեն մի առիթի, եթէ սովորել է իր մայրենի լեզուն, ծանօթ է անցեալի եւ ներկայի հետ, յաճախում է ազ-

գային եկեղեցի եւ չէ թաղամասում իր ազգանունը—անպայման հայրենասէր է ճանաչվում։ Եւրոպացու հայեացքը միանգամայն տարբերվում է։ Նրա տեսակէտից այդ յատկութիւնները քնական բան են եւ մի առանձին առաւելութիւն չեն համարվում։ Նա առիթացու հայրենասիրութիւնը կարող է միայն ծաղրել։ Ամեն մի եւրոպացի, կին թէ տղամարդ, քաղաքացի թէ գիւղացի, ինտելիգենտ թէ աւաղի, միշտ ի նկատի ունի իր հայրենիքի շահերը ամենալայն մաքուր։ Նա ամեն կերպ աշխատում է հայրենի հարստութիւնը հայրենիքի մէջ պահելու եւ այդ նպատակին հասնելու համար անհիշելի ջանքեր փրանիւնք։ Փրանիւնք փրանիւնք փրանիւնք։ Եւ ինչպէս փրանիւնք է կառուցանում, կառուած է մշակում, խանութի համար գործակալար է վարձում, այդ միեւնոյն է, նա օտարին չէ ճանաչում, նրա համար գոյութիւն ունի միմիայն փրանիւնքը։ Նա օտար վաճառականից բան չի գնի, օտար լեզուով ներկայացումներ, կենցաղներ չի այցելի, որպէս զի իր փողերը օտար երկրի տեղափոխելու առիթով տուած չը լինի։

Ծանկանալով խօսքս կարճ կտրել, պէտք է վերադառնամ պատկերահանդէսի հարցին։ Գանի անգամ Այվազովսկին, Վերեշագին եւ Անտոնովսկին իրանց աշխատութիւններից ցուցահանդէսներ են բացել Պարիզում։ Զնամրիւ է, մասնաւոր միշտ համակրանքով է վերաբերվել, զաւաճականական ահագին յոգնածներ է նուիրել, բաւականաչափ այցելուներ են եղել եւ... ուրիշ ոչինչ։ Ոչ թէ միայն նրանց բոլոր աշխատութիւնները համարեա անվաճառ են մնացել, այլ եթէ փրանիւնք լուի այցելելու պատիւ են արել, դրա պատճառը պէտք է որոնել նրա նստում, որ այնտեղ սովորութիւն կայ, երբ օտարականը պատկերահանդէս է բացառում, մուտքը ձրի պէտք է լինի, նոյն իսկ մի քանի հազար օրինակ հրատարակութեան պէտք է ուղարկել զանազան անձինքներին։ Եւ այսպէս, մեր առաջնականագր արտիստները բաւականացել են պատճառական ցուցերով եւ իրանց գործերը ամբողջովին (անհշիւ բացառութեամբ) յետ են բերել։ Ուրեմն օտար միջոցով խօսքը թէ զրոյց ամեն կերպ աշակցում են եւ խրախուսում մեզ, բայց նրանցից ոչ մի նիւթական օգուտ չէ հասնում մեզ։ Նրանք առանց ծածկելու խոստովանում են՝ Վենից պարտաւոր ենք մեր արտիստներին ու հեղինակներին աշակցելու, որպէս զի մեր ազգային գեղարուեստը եւ գրականութիւնը զարգանա եւ առաջադիմեն։

Եւ անա մի առաջնականագր աղբ, որ այսպիսի հայեացքներով է օժտված, օրեցօր հարստանում է թէ նիւթական եւ թէ մատուցողութիւն փոյթ եթէ մենք մեր տեսակէտից կանխաւենք նրանց անբարոյական, էգոիստ։ Ինչպէս նախընթաց նախապաշտ յայտնեցի, այժմեան փրանիւնք պատկերահանդէսը ոչ մի կապ չունի գեղարուեստի հետ, այլ լուի Հաւատականական ձեռնարկութիւն է՝ հիմնված խաբարայութեան վրա։ Ծաւաւ եմ, որ քաղաքիս բոլոր գեղարուեստագէտները, աշխարհը տեսնածները, համակարգել լինելով ինձ հետ հանդերձ, ոչ մի բողբ չը յայտնեցին մասնաւոր միջոցով, որպէս զի մեր ինքնասիրութիւնից զուրկ եւ օտարամիտ հասարակութիւնը սխալեցնէին մոլորութիւնից։ Այժմ ձառնիկ փրանիւնքից ինչ մի փոփոխութիւն աւելեց, որ փակվելուց առաջ մեծ զիջումով է ծախվում ֆրանսիական նկարիչներին իր նկարները։

Եւ իրաւ, էժանացրել, նոյնպէս մեծ ցաւ պատճառելով այն զաւգրանից այլ սիրահարներին, որոնք համարեւութիւն չունեցան մինչեւ վերջը սպասելու եւ չտապեցին հազարներ վաճառելու այնպիսի բաների համար, որոնց նրանք անհետ կիսաւառնում են ծախվում։

Պարտականութիւնս կատարելու համար դարձեալ կրկնում եմ, որ այդ պատկերահանդէսը բաղկացած է փողոցային նկարներից եւ միանգամայն զուրկ է որ եւ է գեղարուեստական աշտանիքից։ Բայց մեր ունեւոր դատակարար միջոցաւեւներից սկսած, տուտ հազար բուրժուազներ, որոնք համարեւութիւն չունեցան մինչեւ վերջը սպասելու եւ չտապեցին հազարներ վաճառելու այնպիսի բաների համար, որոնց նրանք անհետ կիսաւառնում են ծախվում։

Ինչպէս տեսնում էք, մեր արտիստներին հայրենասիրութիւնը եւրոպացիների նման նեղ չէ։ Գ. Բաշինջուղեան

ՆԱՄԱԿ ԵՎԱՏՈՐՆՈՂԱՐԻՑ

Նոյեմբերի 18-ին

Արամ Ղազարեանը վախճանվեց։ Սրանից մի քանի օր առաջ գրեցի «Մշակին», որ մի հայ, թիֆլիսցի, այստեղ վերաբնակած, կամեցաւ մահվանից առաջ կտակ անել, որ իր արիւն քրտինք աշխատած փողերը, գոնէ իր մահից յետոյ, որեւէ օգուտ բերէին եւ այն աղգին, որի զաւակ էր համարվում։ Նա կենդանութեան ժամանակ ոչնչով չէր զանազանվում իր նման հազարաւոր մարդկանցից. ապրում էր, զաղում էր, ուտում էր, Բայց անա մարդը զգում է, որ այդ էլ այնքան մեծ բաւականութիւն չը պատճառեց իրան, զգում է, որ չուտով գոցէ թողնելու է այս աշխարհը, կանչում է բարեկամներին եւ... հետեւանք մի կտակ, որով իր թէն փողերի կարողութիւնը համալսի կերպով բաժանվում է կնոջ (անգաւակ) եւ զրոյ զաւակների մէջ եւ մեծ մասը յատկացվում է բարեգործական նպատակներին։ Սակայն այստեղ էլ առողջ դատողութիւնը վերահասու է լինում, եւ փոխանակ ապարդիւն հիմնարկութիւններին իրականացնելու, ինչպէս ասում են «առիւծի բաժինը» անցնում է Թաւրիկի Հայունեաց Միացեալ Բարեգործական ընկերութեան, որը պէտք է կատարած գումարի (առ այժմ 7 հազար) տոկոսներով բաց անէ Պարսկաստանի որ եւ է խուլ, մութ անկիւններից մէկում զուստնաւոր թաղոց։

Արամ Ղազարեանին թաղեցինք, բայց նա յաւերժացրեց իր անունը. գոցէ մի տարի չի անցնի, երբ Պարսկաստանի մի հայ գիւղը, ուր կը բացվի դպրոցը, նորից կարտասանէ՝ Արամ Ղազարեան, տեսնելով, որ մի անյայտ հայ մարդ, իր դառն աշխատանքի բարի պտուղներ ի վայելմբ յանձնարարում է այդ հայ գիւղին։

Համաձայն եմ Գառնիքի քանաչափ հետ, որը եկեղեցում դամբանական տապալի վերջապիւրջ այսպէս՝ Ահա այդպիսիներն են պատկի արժանի, իսկ եթէ բոլորն էլ պաւկներ են դնում պատճառած հանգիցեալի վրա, այն էլ մեծ թուով պաւկներ, դա նշանակութիւնից զուրկ մի սովորութիւն է դառնում. այս հանգիցեալը 20 տարի աշխատեց, կօպէկ կօպէկ հաւաքեց եւ եթէ կենդանութեան ժամանակ անյայտ էր, գոնէ մահնելիս հաւաքեցաւ, որ փողով կարող է ուրիշներին մեծ օգուտներ տալ եւ անունը անմահացնել։ Բոլորն էլ պէտք է օրինակ անենք այս հանգիցեալից։

Մենք գոհ էինք, որ այդ «դրսեցի»-ի շուրջն էին հաւաքվել իր նման ծանօթ, անծանօթ դրսեցիներ, լսելով, որ Արամ Ղազարեանը կտակել է իր ունեցածի կէտը հայ գիւղացուն՝ նրան խաւարից դէպի լոյս քաշելու համար։ Մինչեւ այժմ մի աղցին ոչ մի օգուտ չը տուած Արամ Ղազարեանին թաղեցինք, բայց գոցէ շատ չուտով սկիզբն կաննէ այլ Արամ Ղազարեան, որ յաւերժանա օգտակար կը լինի իր աղգին։ Եւ նախ թէ բարի օրինակներն էլ վարակիչ լինէին Եկատերինօզարի թէ զոտեցի՝ եւ թէ մահնաւոր նոր-նախիշիւանցի աղաներին, որոնցից ոմանք, բացի վնասներից, ոչ մի օգուտ չեն առել իրանց աղգին։ Եւ թէ կենդանութեան ժամանակ ազահութիւնը չէ թող տալիս հրաժարվել ունեցածից, գոնէ մահնելիս ձեր վրա եղած արատները մի կերպ աշխատեցէք մաքրել։ Հուսատացած եղէք, որ հետեւեք շատ բան տանելու էլ։

Միշտ յիշեցէք Արամ Ղազարեանին, նա աղա չէր կենդանութեան ժամանակ, բայց այժմ աղայից բարձր կը լինի։

Նույն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ուրբաթ, նոյեմբերի 22-ին, Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաւորանդ եւ Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչի ծննդեան ասնի օրը, թիֆլիսի Ալեքսանդր-Նեւսկի զինուորական տաճարում կատարվեց հանդիսաւոր պատարագ եւ զոհացողական մատթանք, որին ներկայ էին կովկասեան բարձրագոյնագր ազատեանները եւ բազմաթիւ տղթոյններ Գոհացողական մաղթանքներ կատարվեցին նաեւ Վանքի մայր եկեղեցում եւ միւս գաւառական թիւներին աղթատներում։ Գաղաքը առաւօտ-վանից զարդարված էր դրօշակներով եւ երեսկոյն լուսալաւաւած։

Ուրբաթ, նոյեմբերի 22-ին, երեկոյան ժամին 5-ին եւ 55 օպէլին, Անդրկովկասեան երկաթուղու գնացքով Բորժոմից թիֆլիս ժամա-

Электропечатная Грва. Чаят. Т—ва. Б.-Ванская ул.